ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Սովորողի արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Դպրոց- Արինի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ- Ասատրյան Վանուհի Հարութիկի

Ղեկավար- Օհանեսյան Կիմա

ՎԱՅՔ 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գրական ակնարկ 5

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՀԱՎԵԼՎԱԾ 17

Ներածություն

Մանկավարժական գիտության մեջ արժեքային համակարգ հասկացությունը ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Արժեքային համակարգի զարգացման արդիականությունը կայանում է նրանում, որ աշակերտների մոտ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները՝ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում աշակերտների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Դպրոցի դերն այսօր մատաղ սերնդին տրամադրելն է ոչ միայն ճանաչողական ոլորտում ավանդական գիտելիքներով և հմտություններով, այլև խաղաղության մշակույթի, մարդկային փոխհարաբերությունների մշակույթի վերաբերյալ արժեքային պատկերացումների ձևավորման գործում: Եթե մենք

կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Արժեքները և արժեքային համակարգը մարդու և ողջ հասարակության կյանքի և մշակույթի անբաժանելի մասն են: Ներկայումս՝ անցումային ժամանակաշրջանում մեծ վտանգը է ներկայացնում հին արժեքների հնարավոր կորուստները ինչպես նաև նոր արժեքների ոչ ճիշտ ընկալումը: Հասարակության զարգացմանը զուգահեռ սոցիալական փոփոխությունները առաջացնում են արժեքային համակարգի խնդիրներ: Արժեքների անորոշ ըմբռնումը փոխում է վերաբերմունքը կյանքի, ընտանիքի և աշխատանքի նկատմամբ, հանգեցնում է սոցիալական պասիվության: Կարևոր է ունենալ արժեքների և արժեքային կողմնորոշումների հստակ համակարգ, քանի որ արժեքները որոշում են նպատակները և, ամենակարևորը, դրանց հասնելու ուղիներն ու միջոցները: Այս ամենը կձևավորի ողջ հասարակության մշակույթը: Ուստի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Անհրաժեշտ է անհատին ոչ միայն գիտելիքներով զինել, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորել: Արժեքային համակարգի կարևորագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը միանշանակ լավագույն կերպով կարելի է սերմանել հայոց պատմության դասերի: Պետք է ուսուցիչը կարողանա անցյալի փորձը ծառայեցնի ապագա սերունդների կրթմանը և մշակութային արժեքների ստեղծման ու պահպանմանը:

Նպատակները:

Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Ուսումնասիրության նպատակներից է նաև սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում:

Խնդիրները:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Գրական ակնարկ

Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին, ով իր աշխատություններով նպաստում էր կրթության առաջադեմ շարժմանը, համոզված էր, որ լավագույն կրթությանը հասնում են կրթության միջոցով: Դեռևս Սոկրատեսն էր իր սաներին սովորեցնում տրամաբանորեն և վերլուծելով մտածել, սակայն արաջին անգամ տեսականորեն այն մշակել է Ջոն Դյուին: Իսկ ըստ ռուս հայտնի հոգեբան Ռուբինշտեյնի, մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով: Վիգոտսկին էլ ձևակերպել է մի օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ, ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպես կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը, արդյոք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ, յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանողռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Հայերենի ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույցդասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության - հանրագումարային դասերը, կինոդասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը: Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, մեր համոզմամբ, խառը /համակցված/ դասն է, որին ստորև կանդրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն: Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում , ընդհանրացում, ստուգում և գնահատում: Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս: Այս դասի ընթացքում գործադրվում են բացատրականցուցադրական, էվրիստիկ զրույցներ, դատողական բացատրական-ցուցադրական, դատողական, վերլուծական և այլ եղանակներ: Եթե դասին գրեթե հավասարապես են ներկայացվում երկու կամ մի քանի դիդակտիկական նպատակներ, ապա դա կլինի խառը միացյալ դասի այս կամ այն տարբերակը:

Դասի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ 8 դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում 9 իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման

արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Հայոց պատմություն առարկայի ուսուցման գլխավոր նպատակն ազգային գիտակցությամբ օժտված, համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից անհատի, հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական կարևոր խնդիրներ, մասնավորապես՝ Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելի պես պետք է անցնի ազատության,անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից:Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին: Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները: Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին: Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը,ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ: Դաստիարակել բարոյական այնպիսի արժեքներ, ինչպիսին են՝ բարությունը, ազնվությունը, համբերատարությունը:

Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել

ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին: Կօգնի զգալ հայրենիքի ուժն ու զորությունը: Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները: Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից, մտքերի ու գաղափարների բախումից: Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է: Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը: Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին: Նպաստել մարդասիրությն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը: Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն: Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ: Զարգացնել սովորողների ՝ ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

Ներկայացնեմ մի քանի մեթոդներ և հնարներ, որոնք կիրառվել են իմ կողմից սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման և զարգացման նպատակով:

Մեծագույն արժեքը արժեքային համակարգի հայրենասիրության զգացումն է, պատմության դասընթացը աշակերտների մոտ վերջինս զարգացնելու նպատակով բազմաթիվ միջոցներ է ընձեռում: Դասապրոցեսի ընթացքում ուսուցիչը լուծում է դաստիարակչական խնդիրներ հաշվի առնելով տվյալ թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում : Դասապրոցեսի ընթացքում հաճախ եմ կազմակերպում հայրենասիրական թեմաներով

միջոցառումներ, տարբեր տեսակի ֆիլմերի դիտումներ: Օրինակ, նշեմ վերջերս իններորդ դասարանցիների հետ կազմակերպել էինք Գարեգին Նժդեհին նվիրված ֆիլմի դիտումը: Որից հետո կազմակերպեցինք աշակերտների հետ քննարկում և կարող եմ ասել, որ աշակերտները շատ տպավորված էին: Հաջորդ խնդիրը մշակույթային արժեքները ճանաչելն ու գնահատելն է:

Մշակույթի դասերը անցնելիս պետք է աշակերտներին ներկայացնել հայ ժողովրդի աշխարհագրական միջավայրը, նրա կազմավորման գործընթացները և դարերի ընթացքում կերտած մշակութային արժեքները: Աշակերտների մոտ ավելի պատկերավոր այդ դասերը անցկացնելու նպատակով դասապրոցեսը կազմակերպում եմ տեսադասերի ու էքսկուրսիաների միջոցով: Կազմակերպել եմ էքսկուրսիաներ դեպի՝ Գառնի, Գեղարդ, Հաղպատ, Սանահին: Այս այցերի արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է գեղագիտական ճանաչողությունը, ընդլայնվում է աշխարհայացքները և ձևավորվում է նոր մտածողություն դեպի մեր մշակույթը:

Դասի ընթացքում արժեքային համակարգի ձևավորման նպատակով նաև կարևոր է ինքնուրույն և խմբային աշխատանքների կազմակերպումը: Ակտիվ ուսուցման մեթոդներից հաճախ եմ կիրառում՝ մտագրոհ, վենի դիագրամա, ԳՈՒՍ, Տ-աձև ու Մ-աձև աղյուսակները, դերային խաղ, բանավեճներ, խճանկար, քառաբաժան մեթոդները: Օրինակ՝ մտագրոհ մեթոդը կիրառելիս սովորողները թվարկում են ուսումնասիրվող նյութի հետ առնչվող բառեր և գաղափարներ, օրինակ՝ պատերազմ, մշակույթ, հայրենիք, պետություն հասկացություններով: Վենի դիագրամայի ժամանակ աշակերտները համեմատում են երկու կամ ավելի անձանց, իրադարձությունների:

Դրամատիզացիա: Այսօրվա ավելի ու ավելի բևեռացված և անհանդուրժող մշակույթում ուրիշների շարժառիթներն ու ընտրությունները հասկանալու կարողությունը կարևոր է:

• Դրամատիզացիան օգնում է գլոբալ պատասխանատու քաղաքացիների ձևավորմանը: Դրամատիկան միանգամից մի քանի նպատակ է իրականացնում՝ հարստացնելով ուսանողների դպրոցական փորձը արվեստի միջոցով, ինչպես նաև ամրապնդելով ավանդական գիտնականներին: Դրամատիկան կարող է օգտագործվել ցանկացած առարկայի ակտիվ ուսուցման խթանման համար՝ ինչպես նաև թեմայի ինտելեկտուալ ըմբռնում տալու համար: Պատմության դրամատիզացումը նույնացվում է որպես արտահայտիչ արվեստներից մեկը, որը վերաբերում է երեխաների ներքին երևակայական մտքին և ստեղծագործական ձևերով նրանց ինքնաբուխ դրամատիկական 16 գործողություններին: Դասարանում դրամատիզացիայի օգտագործումը կխթանի իրազեկությունը ճշմարիտ և ազնիվ գործելու կարևորության մասին՝ օգնելով գիտակցել, թե ինչպես է մեր վարքագիծը ազդում ուրիշների վրա: Փոքր երեխաների արտահայտչականության մեջ դրամատիզացումն է՝

●Ինքնաբուխ,

●Իմպրովիզացված

●Ստեղծագործական ներկայացում:

• Մեր օրերում դրամատիկական արվեստը կարևոր միջոց է ստեղծարարությունը խթանելու խնդիրների լուծման գործում:

• Դրամատիկ հետազոտությունը կարող է աշակերտներին հնարավորություն տալ հույզերի, մտքերի և երազանքների համար, քանի որ նրանք այլ կերպ արտահայտելու միջոցներ չունեին: Այն կարող է մարտահրավեր նետել ուսանողների պատկերացումներին իրենց աշխարհի և իրենց մասին:

2) Պատմություն

Մեծ տղամարդկանց և կանանց, սրբերի և հերոսների կյանքի մասին պատմությունները կբորբոքեն հետազոտության ոգին և կխթանեն բարձրագույն իդեալներն ու մարդկային արժեքների ըմբռնումը: Պատմելը և՞ արվեստ է, և՞ գիտություն:

3. Արժեքի պարզաբանում Արժեքների պարզաբանումը աշակերտներին խրախուսելու տեխնիկա է, որպեսզի նրանք փոխկապակցեն իրենց մտքերն ու զգացմունքները և

դրանով իսկ հարստացնեն իրենց սեփական արժեքների գիտակցումը: Քանի որ արժեքները որոշումների և գործողությունների մեծ մասի շարժիչ ուժն են, դասարանի գործունեությունը պետք է կենտրոնանա աշակերտներին ներգրավելու վրա:

4) Խմբային գործունեություն Խմբային գործունեությունը հնարավորություն է տալիս միաժամանակ սովորելու բազմաթիվ արժեքներ: Կարևոր է սիրո, հանդուրժողականության, համագործակցության, խաղաղ համակեցության, ուրիշների նկատմամբ հարգանքի հիմնարար արժեքների զարգացումը: Խմբերում աշխատելով՝ ուսանողները սովորում են միմյանց անկեղծ ջանքերի արժեքը, ամբողջ խմբի բարօրության համար լավագույնն անելու ուրախությունը: Դերային խաղերը, խմբային քննարկումները, խմբային նախագծերը և այլն խմբային գործունեության մի մասն են, որոնք կարող են օգտագործվել նաև դասավանդման առարկաներում: Կարևոր է, թե ինչպես են բովանդակալից կազմակերպվում նման միջոցառումները: Արժեքների կրթության հիմնական հետևանքը մտածելու ժամանակ տալն է: Դպրոցներում աշխատանքը չափից շատ զբաղված է, կատաղի աշխատանք, որը կարող է արդյունավետ լինել կամ ոչ: Ինչպե՞ս է հնարավոր դա անել արդեն իսկ գերծանրաբեռնված դպրոցական գրաֆիկում: Սա դպրոցի որոշելիքն է և առաջնահերթությունը: Ամեն դեպքում, կարևոր կետը, որը պետք է հիշել, այն է, որ ցանկացած տեսակի գործունեությանը պետք է հետևի որոշակի փորձառության արտացոլումը: Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Կարծում եմ, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման և ապահովման համար Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ որն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթականդպրոցիտնօրենիուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ:
2. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.,

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասի պլան

Ամսաթիվ՝ 20.09.2023 թ.

Առարկա՝ Հայոց եկեղեցու պատմություն

Դասարան՝ 11-րդ

Թեմա՝ Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը

Կազմող ուսուցիչ՝ Վանուհի Ասատրյան

Նպատակ՝

- Ամբողջական պատկերացում տալ քրիստոնեական-ազգային արժեհամակարգի ձևավորման գործընթացի , ազգային-հոգևոր նկարագրի կառուցվածքի և բաղադրատարերի վերաբերյալ:
- Պատմական նյութի հիման վրա կատարել ընդհանրացումներ և եզրահանգումներ

Վերջնարդյունքներ՝

- Ամբողջական պատկերացում տա քրիստոնեական-ազգային արժեհամակարգի ձևավորման գործընթացի , ազգային-հոգևոր նկարագրի կառուցվածքի և բաղադրատարերի վերաբերյալ:
- Պատմական նյութի հիման վրա կատարի ընդհանրացումներ և եզրահանգումներ

Կարողունակություններ՝

- սովորել սովորելու կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Խաչվող հասկացություններ՝

1. օրինաչափություն

Անհրաժեշտ նյութեր՝ դասագիրք, տետր, ուսումնական նյութ, գրատախտակ:

Միջառարկայական կապ՝ Պատմություն, Գրականություն

Հարցերով ամփոփում ենք նախորդ դասը:

ԽԹԱՆՈՒՄ

Դասի կառուցվածքը ԽԻԿ համակարգով:

Ուսուցիչը գրատախտակին գրում է արժեքային համակարգ հասկացությունը: Աշակերտները «Մտագրոհ» մեթոդի միջոցով գրատախտակին գրում են այն բոլոր հասկացությունները, որոնք հասկանում են արժեքային համակարգ ասելով: Այնուհետև ուսուցիչը տեղեկություններ է հաղորդում քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ: (10 րոպե)

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Ուսուցիչը համառոտ տեղեկություններ է հաղորդում քրիստոնեական ազգային արժեքային համակարգի մշակման կետերի ստեղծման վերաբերյալ: Աշակերտների հետ հարց ու պատասխանի միջոցով են հիշել հայոց պատմությունից անցած և թեմային առնչվող կարևոր պատմական փաստեր: (10 րոպե)

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Դասարանը բաժանվում է երկու խմբի: Կազմակերպվում է քննարկում հետևյալ հարցի շուրջ. Ի՞նչ է անհրաժեշտ քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորման համար: (15 րոպե)

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ամփոփում են դասը՝ նշելով կարևորագույն փաստերը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Միավորային